



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈԴՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՔԱՆՆԵՒԻՆՆԵՐՈՐԳ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1874



ԿՈՍՏԱՆՆՉՆՈՒԳՈՒԹԻՒՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻԵՂԵՆՏԻՆԱՆ

— 1874 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԻԹ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1871

ՆԱԽԱԴԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Բ. ԴԱԶԱՐՈՍԵԱՆ ԷՖԷՆՏԻ (Առժամանակեայ կ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Վաւերացումն նորրնտիր Երեսփոխանաց :
2. Ատենական կանոնադրութիւն :
3. Համարատուութիւն Ազգ. Վարչութեան :
4. Հրատարումն Ազգ. Վարչութեան Քաղ. Ժողովոյ :
5. Կեդրոնացումն եւ Ապակեգրծնացումն :
6. Վերաքննութիւն Սահմ. — Գլուխ Ա :
7. Բացակայ Երեսփոխանաց գրաւոր դիտողութիւններն ընդունելի պիտի ըլլան, թէ ոչ :

Ատենը բանալու՝ սահմանեալ ժամն արդէն անցած եւ երեք Ատենապետները միանգամայն բացակայ ըլլալով՝ Նախագահ Սրբազան Ժողովոյ հաւանութեան վրայ հրաւիրեց զՂազարոսեան Բ. Էֆ. իբր երիցագոյն Երեսփոխաններէն մին՝ առ ժամանակեայ Ատենապետի պաշտօնը վարելու, հետեւապէս Ղազարոսեան Էֆ. Ատենապետի ակտուն անցաւ :

Ատենապետ Էֆ. դիտել տուաւ ժողովոյն թէ՛ լուսագոյն էր միանգամայն իրեն փոխանորդ մը կարգել, ի գործակցութիւն. եւ այս պարագային վրայ ժողովը հաւանութիւն յայտնելով իւթիւճեան Կ. Էֆ. հրաւիրուեցաւ ի փոխանորդութիւն Ատենապետին, եւ Ատենապետ Էֆ. ատենը բացաւ ժամ 7ին, ի ներկայութեան անդամոց մեծագոյն մասի, 33 Երեսփոխանաց, որոց թիւն ի վերջէ՛ 67 ի յանդեցաւ : Ատենադպիր Էֆ. խօսք առաւ Դիւանին ըն-

դունած զանազան գրութեանց վրայ ժողովոյ ծանօթութիւն տալու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գեր. Տ. Խորէն կաթ. հիւանդութեան պատճառաւ ժողովոյ նիստէն բացակայ մնալը ծանուցանող նամակ մ'ուղղած է :

Կիւմիւշկերտան Ռուբէն եւ Շամլեան Համարձու Էֆ. ներու կողմէ՛ ալ հրատարակեցին հասած են Դիւանին : Առաջինը՝ խիստ զբաղեալ ըլլալն յայտնելէ զատ՝ Երեսփոխանական պաշտօնն իւր կարողութենէն բարձր համարելով, եւ երկրորդն՝ ի մօտոյ իւր ի հայրենիս ուղեւորելու մտադրութիւնը յայտնելով, հրաժեշտ կուտան Երեսփոխանութեան պաշտօնէն :

Դիւանն ասոնցմէ զատ ունի նաեւ ի ձեռին, Երեսփոխանական նորոգ ընտրութեանց մէկ տեղեկագիր՝ Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ, եւ մէկ ծանուցագիր՝ Փաւստական հարստա-

հարութեանց: Յանձնաժողովոյ կողմէ, զորս կարգաւ ժողովոյ պիտի ներկայացնէ: Բայց ասոնք խնդրոյ տակ զնեղէ առաջ՝ ժողովը նախընթաց երկու նիստերու ատենագրութեանց վաւերացումն ունի կատարելիք, յորմէ յետոյ այս խնդրոց պիտի ձեռնարկէ բնականաբար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Թէեւ Ի. Նիստի ատենագրութիւնն անցեալ անգամ ժողովը զիտողութեան առած, սակայն մեծագոյն մասի չզոյուլեան պատճառաւ անոր վաւերացումը այս նիստին մնացած է: Ուստի կը հրաւիրեմ անցեալ նիստին քացակայ գանուող երեսփոխաններն որ նոյն ատենագրութեանց վրայ եթէ զիտողութիւն մը ունին՝ յայտնեն այս անգամ:

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՅ. — Նոյն նիստին մէջ, Սահմանագրութեան վերաքննութեան առթիւ Էջմիածնի կաթողիկոսին վիճակին վրայ խօսած ատենս ըսած էի նաեւ թէ՛ առ այժմ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու իրաւունքը ձեռքերնիս պէտք է պահենք: Այս կէտը պակասած է իմ խօսքերուս մէջէն, որք արձանագրեալ են ատենագրութեան 408դ. երեսին մէջ:

ԱՂԱՏԷԿԵԱՆ Մ. ԷՅ. — Ինչպէս անցեալ անգամներուն նոյնպէս եւ այս անգամ ալ իմ ըսածներս արձանագրեալ չեն ճշդիւ, եւ ոճի գաղափարաց ու փոփոխումներ կը կրեն: Եթէ այս այսպէս շարունակուի, իմ խօսելու ազատութիւնս բռնաբարուած կը լինի Գիւանին կողմէ:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Գանի որ Ազաբէկեան էֆ. կը պահանջէ որ անպատճառ իւր լեզուն ու խօսքերն անփոփոխ եւ կէտ առ կէտ գրուին, աղէկ կընէ որ ատենը վերջանալէ ետեւ Գիւանին զիմէ եւ արձանագրութեան թղթերն աչքէ անցնելով սրբազրէ իւր խօսքերը, եթէ թերի գտնէ զանոնք:

Աւրիչ զիտողութիւն ընող չըլլալով Ատենագրութեան էֆ. Նիստի ատենագրութիւնն ընդունուած կը հրատարակէ եւ ԻԲ. ին վրայ ժողովակաւորաց զիտողութիւնը կ'ուզէ:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՅ. — Ատենագրութեան 420դ. երեսին մէջ իմ համար զիտողութեան արձանի երկու կէտեր կան:

Ա. Գարակէօզեան կարապետ էֆ. նախնի որ ժողովին դադար առնելու միջոցին կ'ատենագրուէր, դադար առաջարկած ատենը մեծագոյն մասի ըստ պատկու պարտքը ծանոյց, բայց անոր այս

յայտարարութիւնը նշանակուած չէ ատենագրութեան մէջ:

Բ. Գաղարէն ետեւ երբ ատենն սկսաւ շարունակուիլ, արդարեւ ես խօսք ուղեցի եւ Ատենագրութեան Օտեան էֆ. չըտուաւ: Ինչպէս նշանակուած է ատենագրութեան մէջ, բայց չէ նշանակուած իմ երեք անգամ խօսքս: Եւ ըստ ըստ, որ եթէ տրուեց պիտի ակնարկելի թէ՛ Գ. Ատենագրութեան Գարակէօզեան էֆ. զադար առաջարկած ատեն ըրած յայտարարութեան պէտք է հետեւիլ, այսինքն մեծագոյն մասին ներկայութեան սպասելու է նոր խնդրոց մը վրայ խօսելու համար:

Ատենցմէ զատ վերջին 428դ. ձեռնարկէ մէջ ալ պէտք էր նշանակել նաեւ իմ խօսքս, որ ըստ օրինի ըրած էի եւ բողոք մ'էր անոնց դէմ՝ որք կ'ուզէին խնդրոց կարգին մէջ աւելցնել Պրոսպի անուամբ խնդիր մը: Իմ այն խօսքիս յաջորդած է Եռուսեֆեան էֆ. ինք, որ նշանակուած է յիշեալ երեսին մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. Ալաճաճեան էֆ. կը պահանջէ որ իւր խօսքս Գ. նշանակուած լինէին ատենագրութեան մէջ, բայց չը յիշեք որ ատենագրութիւնը միայն կ'անցնին հոն, եւ խօսքս Գ. նշանակութիւն չունին:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՅ. Բայց քանի որ անգամ մը նշանակուած է իմ խօսք ուղեւ, պէտք էր որ միւսներն ալ նշանակուած լինէին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. Ալաճաճեան էֆ. երեք զիտողութիւններն ալ պատասխանի կը կարծուի: Նախ կ'ըսէ թէ՛ Գարակէօզեան էֆ. մեծագոյն մասի ներկայութեան սպասելու պէտքը ծանուցած է, անցեալ նիստին մէջ եղած հարցման խնդրոյն համար, բայց թէ՛ նշանակուած չէ այս: Ալաճաճեան էֆ. նախնի ատենագրութեան տեարն աւելի եւս ուշով քննելու հրաւիրելէ զատ կը յաւելում որ իւր այս զիտողութիւնն՝ ատենց խօսքին հեղինակին, Գարակէօզեան էֆ. զիտողութեան արձեք չ'ունի, եւ քանի որ Գարակէօզեան էֆ. ներկայ չէ այս վիայութիւնը տալու, անլսելի կը մնայ նոյն զիտողութիւնը:

Երկրորդ՝ եթէ Ալաճաճեան էֆ. պարտաւոր կը ճանչէ զԳիւանին իրեն բողոք խօսքս Գ. նշանակութեան մէջ նշանակելու, եւ կը կարծէ թէ զանոնք ի բաց թողուլ՝ ատենագրութիւնը խեղաթիւրել ըսել է, շատ աղէկ կ'ընէ որ Ատենագրութիւնը դէմ ամբաստանագիր մը պատրաստէ եւ ընդհ. ժողովոյ առջեւ բողոք բառնայ, իւր խօսքս Գ. ներկու համար: Ատենագրութեան մէջ գրուած խօսքս Գ. նշանակութիւնը անկողմնակալ նշանակութիւն մը

կը կրէ, որոյ խնամքը խիստ դիւրին է ըմբռնել:

Երրորդ՝ Ալաճաճեան էֆ. նիստին վերջումս տառն Եռուսեֆեան էֆ. խօսքէն առաջ եթէ խօսք մ'ըրած է, անուշտ առանց խօսք ուղեցու եւ աղմուկի մէջ արտասանած է, որ զժողովուրդ արձանագրութեանց մէջ ստէպ անդի ունեցաւ: Վասն զի ժողովոյն մէջ զատ զատ բռնուած բոլոր արձանագրութեանց թերթերուն վրայ այս խօսքին ստուերը չկայ:

ՊԷԿԵԱՆ Ք. ԷՅ. — Ալաճաճեան էֆ. սխալ կը թարգմանէ Գարակէօզեան էֆ. խօսքը: Վասն զի նա չըսաւ թէ մեծագոյն մասի պէտք կայ, այլ վիճարանելու համար մեծագոյն մասի ներկայութեան սպասելու պէտք չըլլայ ըսաւ: Տե՛ս, Ատենագր. երես 419:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — Ատենագրութեան մէջ կը տեսնեմ որ քանի մ'անգամ ժողովականաց ոմանց խօսելու ժամանակ չ'ուկնեք եղբր եւ նշանակուեք են, մեր խօսելու ատենն ալ քանի մը էֆ. ներ չ'ուկ յարուցին, անոնք ինչո՞ւ նշանակուած չ'են:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը հրաւիրեմ զԱտենագրութիւն էֆ. որ այս խմբագրական մասի վերաբերեալ զիտողութեան պատասխանէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ատենագրութիւնը չ'ուկնեք ու ստորաբաժանման կանոն մ'ուսած չ'է որ, կարենաբանոցմէ մաս մ'ալ Տ. Ամբրոսիոս Աարդապետին նուիրել եւ նորա պահանջուած գոհացնել: Երբ Տ. Ամբրոսիոս Աարդապետ չ'ուկն ընթացած միջոցին խօսած ըլլայ եւ չ'ուկն առանց վերջ գտնելու շարունակէ, կրնայ չ'ուկն այն մասը՝ ըստ իւր հաշուոյ՝ երկրորդ կամ երրորդ չ'ուկ ըմբռնել, յանգէտս Գիւանին:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՅ. — Ատենագրութեան մէջ տեղ տեղ զժողով միմուսներ, չ'ուկնեք նշանակուած են անցեալ նիստին մէջ, ատեն ատեն ալ գո՞ չ'ուկնեք ընթացան, ես ալ գո՞ չ'ուկ հանողներէն մինն էի, անոնք ալ պէտք էին նշանակուիլ:

(Ընդհանուր և եղբրս Էջմիածնի)

ՍՐԱՃԱՃԵԱՆ Տ. ԷՅ. — Ան՝ գո՞ չ'ուկնեք կ'աղաչեմ չը մոռցուին նշանակուելու, որպէս զի զալ նիստին ալ անոր վրայ զիտողութիւն մտիկ չընենք:

Նախընթաց ԻԲ. նիստի ատենագրութեան վրայ ուրիշ զիտողութիւն չըլլալով Ատենագրութեան էֆ. ընդունուած կը հրատարակէ զայն, եւ հետեւապէս կը հրաւիրէ ժողովականներն որ կիւ-

միւշկէրտան եւ Շամիւսն էֆ. ներու հրատարականերուն վրայ իրենց կարծիքը յայտնեն:

ԽՅԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Արտիկան Շամիւսն էֆ. ճանկորդութեան պատճառաւ կը հրատարի եւ այս պատճառին համար հրատարիլն աւելորդ է, ժողովոյ նախորդ մէկ որոշման համաձայն, հետեւապէս Շամիւսն էֆ. ի հրատարականն անընդունելի է. սակայն կիւմիւշկէրտան էֆ. ըստ որում կամովին կը հրատարի եւ իւր մէջ բերած պատճառն իրմէ կախում ունի, ասոր հրատարականն ընդունելի է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Դիտել կուտամ Սոզն էֆ. ի որ Շամիւսն էֆ. կը հրատարի իւր հայրենիքը վերադառնալու պատճառաւ, եւ չէ թէ պատահական ուղեւորութեան, ուստի իւր հրատարականն ընդունելի կը համարուի:

Ատենագրութեան էֆ. այս երկու երեսփոխանաց հրատարականները քուէի կ'ենթարկէ, եւ ժողովն ընդհանուր հաւանութեամբ կ'ընդունի զանոնք, եւ Ատենագրութեան էֆ. կանցնի խնդրոց կարգին:

Է. ՎԱԵՐԱՅՈՒՄՆ ԿԱՐԵՍԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ընդհանուր ժողովոյ վերանորոգման Գործադիր Յանձնաժողովը՝ երեսփոխանական նորոգ ընտրութեանց վրայ տեղեկագիր մը մատուցած էր, ուղղեալ առ Նախագահ Սրբաղանն:

Ատենագրութիւնը սոյն տեղեկագիրը ներկայացուց ժողովոյն եւ ընթերցաւ, որուն ահաւասիկ պատճէնը:

Ամենապատիւ Սրբաղան Հայր, եւ այն:

Չալատու Ընտրողական ժողովոյ Նախագահն Չ Սոցոստոս թուականաւ նամակով կիմացնէ թէ՛ նոյն թաղի Գ. վիճակաւ դադարեալ երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութեան ձեռնարկուեք, Յուլիս 25 ին առաջին քուէարկութիւնը կատարուեք, եւ բացարձակ առաւելութեամբ երեսփոխան վերընտրուեք է:

Մ. Յակոբ էֆ. Սարգսեան, 21 քուէով:

Մնացեալ երկու երեսփոխանաց ընտրութեան համար, Սոցոստոս 1 կիրակի օրը քուէարկութիւն եղեր է, եւ ընտրուեք են:

Տօքթէօր Ռաֆայէլեան էֆ. 16 քուէով:

Գրիգոր էֆ. Մարկոսեան 40 «

Միքայէլ « Մովսէս 40 «

Վերջին երկուքը հաւատար քուէ ստացած ըլլալով, երիցագոյնը՝ այն է Մարկոսեան Գրիգոր էֆ.՝ ընտրեալ կը համարուի:

Ընդհ. ժողովն անխտոր հանրական խնդիրներու, իւր պաշտօնին յատուկ խնդիրներու վրայ պիտի խօսի, զբաղի: Այս տեսակ մասնաւոր խնդիրները՝ սահմանադրապէս ունին իրենց պատկանեալ ժողովները եւ պէտք է ուղղակի անոնց դիմեն: Ես առանց այդ գրեթե ընթերցումն ուղղելու կրնամ թէ՛ որ ժողովին որ կը վերաբերի, անոր պէտք է զրկել, եւ կը բողոքեմ տարրեր անօրէնութեան դէմ:

ԱՅՎԱՃԵԱՆ Յ. ԷՅ. — Կը ցաւիմ որ Գիւանն այս պարագային մէջ իւր պարտքը չէ կատարեր. Ատենապետ էֆ. ըսաւ թէ նոր եկած թուղթեր կան եւ թէ չգիտէր անոնց իմաստը. ուրեմն ինչո՞ւ Գիւանն անոր խօսքը բացաւ: Ժողովն ասկէ անկէ եւ ենթադրութիւններով կ'իմանայ թէ՛ բողոք մը կը պարունակեն այդ թղթերը, Գիւանին պարտքն էր զանոնք ընթեռնուի, պարզել, որու որ կը վերաբերի՝ անոր ուղղել, բացատրութիւն ուղղել եւ ի վերջէ՛ եթէ հարկ ըլլար՝ հոս բերել պարզուած եւ լուսաւորուած. այն ատեն Ընդհ. ժողովն ալ պէտք եղածը կը անօրինէր: Այս խնդիրը գեւ իսկ վիճակի մէջ է, եւ մենք հոս եկած ենք հիմայ մեր գիտցած խնդրոց վրայ խօսելու եւ զանոնք անօրինելու: Ազգային Վարչութեան հրատարակած խնդիրն որ ամենէն ստիպողականն է եւ անօրինական անօրէնութեան արժանի՝ պէտք է ամենէն առաջ լուծել. վասն զի երբ Ազգ. Վարչութիւնը կը հրատարի եւ տեղը թափուր կը մնայ, մենք ալ հոս գործ չենք կրնար տեսնել:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Երեսօրնական ժողովը որքան եւ գերազոյն հեղինակութիւն մ'ունի, բայց տակաւին սահման մ'ունի իւր վիճակը: Միթէ Գիւանն ամեն ատեն բաց է, եւ կրնայ ամեն խնդիր՝ երբ եւ ըլլայ՝ ընդունիլ եւ ժողովոյն բերել այսպէս անպատրաստ. եւ եթէ այսպէս ընէ, ինչ բանի կը ծառայէ ուրեմն որուան կարգը. մէկ կողմէ մեզի խնդրոց կարգ մը ցոյց կուտայ եւ միւս կողմէ այս տեսակ նոր խնդիրներ երեւան կը հանէ: Գիւանը պարտաւոր էր այդ տեսակ նորիկ խնդիր մը նախ Քաղ. ժողովին դրկէր, եւ եթէ հարկ ըլլար, անոր բացատրութիւններովը հոս բերէր:

Քաղական Խորհուրդներն Ընդհանուր ժողովոյ հետ գործ չ'ունին, իրենց յարաբերութիւնը Վարչութեան հետ է եւ այս ժողովը չը կրնար այդ տեսակ մասնաւոր խնդիրներու զբաղիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Եւ սակայն այս խնդիրը Գիւանն ինք չստեղծեց եւ ինքնին չը բերաւ հոս, այլ նախագահ Սրբազանը գրկեց Գիւանին, որու պարտքն էր ժողովոյ կամայ գիմել, հասկընալու համար թէ նոյն գրեթե ընթերցումը լսել կ'ուզէ՞, թէ ոչ: Եթէ ժողովն իւր մեծագոյն մասովն որոշէ ունկնդիր ըլլալ, Գիւանը կը կարողայ զանոնք, եւ երբ կամք յայտնէ, խնդրոց կարգին մէջ կ'անցնին:

(Քաղ. ժողովն Գիւանին ինքնին չ'ուզէր անցնիլ):

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Խնդրոյն վիճակը Քուրեանն էֆ. շատ աղէկ բացատրեց. ճշմարիտ է որ այս տեսակ խնդիրներ Ընդհ. ժողովոյ մէջ յուզել հակասութիւն մ'է:

Այս թղթերն՝ որք Գիւանին վրայ կը կենան՝ կը բողոքեն ինձ դէմ, Ազգ. Վարչութեան դէմ. բայց այս ժողովն որու նախագահն եմ նաեւ՝ ինչպէս կրնայ դատական ատեան մը դառնալ եւ այս բողոքը քննել:

Ո՞վ պիտի նախագահէ ժողովին, որպէս զի ես այս աթոռէն իջնեմ, եւ ինչ եղանակաւ ես ու ինձ հետ Վարչութեան Քաղ. ժողովն ալ դատուելու պիտի ելնենք, եւ որո՞ւ առջեւ, իբր Վարչութեան անգամակից եւ նախագահ:

Իւսկիւտարի Սէլամիցէ թաղին կողմէ եկած այս բողոքէն սա ընդհանուր խնդիրը կը ծաղիթէ՛ երբ Քաղ. Խորհուրդներն Ազգ. Վարչութեան եւ հետեւապէս անոր նախագահին դէմ բողոք բառնան, ո՞վ պիտի դատաքննէ զանոնք, ինչ եղանակաւ եւ ինչ օրէնքով:

Այս մասին ամենէն առաջ օրէնք մը հարկաւոր է սահմանել. եւ ներկայ խնդիրն ամենէն առաջ՝ եթէ ժողովը հաճի՝ օրուան կարգն անցնել, իբր սկզբան վերաբերող խնդիր մը. զայն լուծել եւ ըստ այնմ վարուիլ նաեւ Իւսկիւտարի Քաղ. Խորհրդոյն կողմէ յարուցեալ այս խնդրոյն մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ինձ կը թուի թէ՛ Ատենական Կանոնադրութեան քննութեան ժամանակ ժողովը կրնայ այս խնդիրն ալ յուզել, լուծել, եւ արդարութեամբ հարկ եղած օրէնքն սահմանելով անցնել նոյն կանոնադրին մէջ:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՅ. — Այս խնդրոյն նկատմամբ երկու տեսակ առարկութիւններ եղան. նախ ըսուեցաւ թէ Ընդհ. ժողովը դատական ատեան մը չէ եւ չը կրնար այս տեսակ մասնաւոր թաղային խնդիրներն ընդունիլ. երկրորդ՝ ըսուեցաւ թէ՛ քանի որ բողոքը նախագահ Սրբազանին եւ Ազգ. Վարչութեան դէմ է, հարկ է ու-

րիչ ատեան մը սահմանել, որպէս զի նախագահ Սրբազանը Ազգ. Վարչութեան հետ իջնէ իր աթոռէն եւ նոր ատենին ներկայանայ:

Ինչպէս յայտնի է Եւրոպայի մէջ երեսօրնական ժողովներուն անհամեմատ կողմէ անգամ խնդիրներ կրնան ներկայանալ, եւ անոնք ալ Յանձնաժողովներ ունին որոնք այսպիսի խնդիրներ ընդունելով կը քննեն եւ տեղեկագրով կը բերեն իրենց կը ներկայացնեն:

Նմանապէս Ընդհ. ժողովն ալ կրնայ այս տեսակ պարագաներու մէջ մի եւ նոյն ընթացքը բռնել, եւ այս խնդիրը յանձնաժողովոյ մը յանձնելով կանցնի ուրիշ ստիպողական եւ կենսական խնդրոց:

Իսկ նախագահ Սրբազանին գիտողութեան գաղով կրնամ թէ՛ հարկ չըկայ որ ինք վար իջնէ իւր աթոռէն. վասն զի կարծեմ թէ Ընդհ. ժողովն երբ այսպիսի խնդիր մը կը քննէ, անպատճառ Վարչութիւնը դատուելու համար չէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Սրբազանն էֆ. ի խօսքէն ետեւ իմ կարգս դեռ հիմայ եկաւ պատասխանելու համար: Սրբազանն էֆ. կը ցաւէր որ Գիւանն իւր պարտքը չէ կատարեր, սակայն Գիւանն իրաւամբ կը ցաւի որ իւր վարմունքը, իւր պարտոց կատարման ուշադիր վարմունքը՝ հակառակ իմաստով կը թարգմանուի, երկու գրութիւններ եկան իրեն տարածամ, Գիւանը ժողովին կամայ գիմեց զանոնք կարդալու համար: Քանի որ դեռ Ատենական Կանոնադրութիւն մը հաստատուած չէ, քանի որ պէտք եղած ժողովային կանոնները սահմանուած չէին, ուրիշ ինչ ընթացք կրնար բռնել, որ միանգամայն անկողմնակալ լինէր:

Գիւանը կը ցաւի նաեւ՝ սա նկատմամբ՝ որ ժողովոյ ժամերուն ինայելու նպատակաւ այս գրութեանց ընթերցումը մերժողներն, ընթերցման հարկ եղած ժամանակէն շատ աւելի վայրկեաններ յուժապէտ սպառել տուին ժողովին:

ԱՏՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՅ. — Դեռ նոր եկայ, սակայն բանախօսութեանց ընթացքէն կ'ըմբռնեմ թէ՛ խնդիրը Քաղական Խորհրդոյ մը կողմէ ներկայացեալ բողոքագրի մը ընթերցման վրայ է:

Ընդհ. ժողովոյ դուր բաց է Գաւառական ժողովներու, Քաղական Խորհրդոց, վերջապէս ազգային բոլոր պաշտօնական մարմիններու եւ անհատից առջեւ, սակայն պէտք է որ՝ ներկայացեալ գրութիւնը կանխաւ Գիւանին հաղորդուած եւ Գիւանը հասու լինի անոնց պարտականութեան, եւ եթէ ուրիշ ժողովի մը կը վե-

րաբերին, անոր գիտողութիւնն առնու եւ այնպէս ներկայացնէ:

Գիւանն այս պահանջումն ընկելու իրաւունք ունի եւ կրնայ ըսել թէ՛ գրենք բաւ որում ատեանը բացուած ժամուն եկան՝ եւ տեղեկ չեմ անոնց պարունակութեան, հետեւապէս ուրիշ ատենի կը թողում: Բայց վերջապէս պարտաւոր է եկած գիրը, ինչ եւ ըլլայ, իբր լսկ գիր մը՝ ժողովոյն ներկայացնելու եւ ընթեռնուելու: Այս չընչանակէր թէ՛ ժողովն անպատճառ նոյն խնդրոյն վրայ ինք պիտի վիճարանի, ի քննի առնու կամ որոշէ. եթէ յարմար դատի կը վիճարանի անոր վրայ եւ խնդրոց կարգը կանցնէ, եթէ ոչ՝ կը մերժէ, առանց վիճարանութիւն անգամ ընելու: Եւ հիմայ որ Գիւանն այս գրութեանց տեղեկ չէ, պէտք չէ զանոնք ներկայացնել, ինչպէս Սրբազանն էֆ. իրաւամբ ըսաւ: Հետեւապէս աւելորդ է վիճարանիլ այս կէտին վրայ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Այլատեսան էֆ. կը վատտարանէ թէ՛ Ընդհ. ժողովը բաց է չորս միլիոն Հայերու առջեւ, եւ թէ ով որ ուզէ՛ պաշտօնական մարմին կամ ազգային անհատ կրնայ թուղթ մը, խնդիր մը բերել ժողովոյն: Շատ աղէկ: Սակայն ժողովն ալ ի հարկէ իրեն օրէնք մ'ունի այս մասին. դո՞ւնէ՛ն այսինքն կանոնադրութեան ճամբով եկած խնդիրները կըրնայ լսել. բայց առաստաղէն ալ երբ թղթեր թափին ժողովոյն վրայ, ինչ ընելու է: Ուրիշ անգամ նմանօրինակ պարագայի մը մէջ, Այլատեսան էֆ. ինքն ըսած է թէ՛ խնդիրը պէտք է նախ Քաղ. ժողովոյն ներկայանայ, որ լուսաւորէ եւ բացատրէ: Հիմա թէ եւ Քաղ. ժողովը հրատարակէ, սակայն պիտի վերակազմուի. ուրեմն խնդիրը հանդերձեալ Քաղ. ժողովոյն կ'երթայ, որ կը զօէ. կը պարզէ եւ իւր տեղեկագրով կ'ատնու վերստին Ընդհ. ժողովոյն կը բերէ: Շատ աղէկ կը յիշեմ թէ Սոյ կաթողիկոսութեան խնդիրն Ընդհ. ժողովոյ բերուած ատեն, գիտողութիւն եղաւ թէ՛ պարզուած եւ բացատրուած չէ: Ռուսիսեան էֆ. ալ այն ատեն նորիմաստ բառ մը դատեր էր եւ խնդիրը չէ՛նչ չէ կ'ըսէր: Նոյնպէս հիմայ եւ այս խնդիրն՝ ոչ բացատրուած է եւ ոչ ձեռնուած:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՅ. — Ի՞նչէ՛նախնիր. ինչո՞ւ կը վարանիք այս բողոքագրերուն ընթերցման նրկատմամբ: Մի կարծէ՛ք թէ անոնք՝ որ յարուցեալ այդ խնդիրը հոս յուզել տալու նպատակ ունին՝ կրնան յաջողիլ: Ընդհ. ժողովը գիտէ իւր ընկալքը՝ Խնդիրը՝ իւր բնութեամբն որ ժո-

դաժան որ կը վերաբերի, անոր պիտի զրկէ եւ այսպէս օրինաւորութիւնը յարդէ: Գիտե՛նք. թաղային վճերէ ծնած խնդիր մ'է այդ. բայց անգամ մը բողոքագիրը թող կարգացուի, տեսնենք թէ արդեօք ազգին տունը քանդելու խրնդի՛ր մ'է, այն որ այսչափ կարեւորութիւն կ'ըստանայ:

Ատենապետ էֆ. Նախագահ Սյրապանի գիտողութեանց վրայ խնդիրը քուէի կը դնէ, եւ ժողովը 43 քուէի դէմ 48 քուէով կը մերժէ եւ սկիւտարու Սէլամիյէ թաղէն եկած գրութեանց ընթերցումը:

Հետեւապէս Ատենապետ էֆ. օրուան կարգին կ'անցնի, եւ Ատենական Նախագորութեան վրայ ժողովոյն գիտողութիւնները կ'ուզէ. սակայն փախազեան էֆ. Քաղ. ժողովոյ Ատենապետին կանխաւ ըրած յայտարարութիւնը կը յիշեցնէ, որու վրայ ժողովն ստիպողական եւ նախագահ կը դատէ Ազգային Քաղ. ժողովոյ հրաժեշտի խնդիրն եւ դայն ձեռք կ'առնու:

2. ՀՐԱԺԱՐՈՒՄԸ ԱԶԳ. ՎԱՐՁ. ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Թէեւ ժողովս Քաղաքականին հրաժարականի խնդիրը նկատողութեան կ'առնու հիմայ եւ այս մասին իր որոշումը պիտի տայ, սակայն թերեւս սակաւ ինչ ուշանայ այս որոշումը. պէտք չէ ուրեմն որ Քաղ. ժողովն ինչպէս իւր Ատենապետը յայտարարեց՝ իւր նիստերը դադրեցնէ, այլ անհրաժեշտ է որ շարունակէ, մինչեւ որ իւր յաջորդն ընտրուի, ինչպէս կը շարունակեն վիճակաւ դադարեալ երեսփոխաններն իրենց պաշտօնը, մինչեւ ցնորոգ ընտրութիւն:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ստոյգ է որ Քաղ. ժողովը կը հրաժարի, բայց իւր հրաժարման պատճառը բացատրող գիր մը, խօսք մը չըկայ, որպէս զի գիտնանք թէ այդ հրաժեշտին տեղի տուող պատճառը կրնայ դարմանուիլ, եւ ըստ այնմ մեր կարծիքը յայտնենք:

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Քաղ. ժողովը չորս ամսէ ՚ի վեր իւր հրաժարականը մատուցած է Ղնդհ. ժողովոյ, եւ իւր համարատուութեան տեղեկագիրն ալ՝ որ այն ատեն իւր հրաժարականին հետ բերած էր՝ տպագրութեամբ հաղորդած է այժմ բոլոր երեսփոխանաց, իւր հրաժեշտին պատճառը յայտնած է յառաջագոյն յատենի աստ: Կը հրաժարի, վստան գի իւր պաշտօնատարութեան շրջանը լրացած է, վստան գի

ազգ. օրէնքն այնպէս կը տրամադրէ: Քաղ. ժողովոյ անդամները Յանձնագրութիւնն այնքան կը յարգեն, որ օրինական շրջանը՝ լրացած ըլլալը նկատելով կը հրաժարին, եւ վերընտրելի չըլլալու պայմանաւ, ինչպէս Սահմանագրութիւնը կը տրամադրէ: Փախաբէյի էր որ Քաղ. Խորհրդոյ անդամներն ալ վերընտրելի չըլլինէին, եւ օրինաց ոգին պատկառանք յարգուէր առ հասարակ: Ահաւասիկ կը յայտարարեմ թէ՛ Քաղ. ժողովն ոչ եւս կրնայ պաշտօն վարել եւ յառաջիկայ երեքշաբթի օր նիստ չունի: Ժամ է արդ՝ որ Ղնդհ. ժողովը Քաղաքականին ընտրութիւնը կատարել փութայ. վստան գի, կը կրկնեմ, Քաղ. ժողովն որոյ հրաժարականը շատ ու շատ երկարաձգեցաւ արտաքոյ կարգի պատճառներով՝ ալ չը կրնար պաշտօն վարել Սահմանագրութեան հակառակ: Եթէ Սահմանագրութիւնն ոտնակոխ ընել ուզողներ կան, թող հրամեն, մենք պիտի յարգենք դայն:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ասկէ առաջ Քաղ. ժողովոյ հրաժարականի խնդիրը յուզուած ատեն, երբ ակնարկութիւններ եղանանոր պաշտօնատարութեան շարունակութեան մասին, Եւստֆեան էֆ. յայտնեց թէ՛ հաւաքաբար այդ մասին բան մը չկրնար ըսել եւ թէ իւրաքանչիւր ժողովականի կամքէն կախումն ունի այդ կէտը: Իսկ հիմայ Ապրո էֆ. Քաղ. ժողովոյ անդամոց վերընտրութեան առջեւ՝ Սահմանագրութեան տրամադրած արգելքը կը դնէ եւ կ'ստիպէ զիս մտածել թէ՛ արդեօք յանուն իւր բոլոր անդամակցաց հաւաքաբար կը խօսի:

ՄԱՐՏԻՉԵԱՆ Գ. ԷՖ. — Այո, ինչ որ Ապրո էֆ. խօսեցաւ, Քաղ. ժողովոյ բոլոր անդամոց կողմէ էր:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ժողովը քաջ կը յիշէ անշուշտ, որ ասկէ առաջ երբ Քաղ. ժողովն իւր համարատուութեան տեղեկագիրը բերաւ, նախաբան մ'ունէր հետը. որով կը մեկնէր թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս Քաղ. ժողովն իւր հրաժեշտն ու համարը տալու ստիպուած էր: Ղնդհ. ժողովն ի՞նչ ըրաւ այն ատեն: Նոյն նախաբանը մտիկ ընելէ ետեւ, ըսաւ, չենք կրնար ընդունիլ Քաղ. ժողովոյ հրաժարականը, մինչեւ որ համարատուութեան տեղեկագիրը տպագրութեամբ բոլոր երեսփոխանաց չը հաղորդուի, եւ ըսող եղաւ թէ՛ Ղնդհ. ժողովն այս տեղեկագիրը քննելով պիտի վերահասու լինի Քաղ. ժողովոյ ընթացքին եւ թերեւս հրաւիրէ:

դայն վերստին իւր պաշտօնը շարունակելու: Ես որ այն ատեն յանուն Քաղ. ժողովոյ կը խօսէի խնդրոյն այս վերջին կէտին վրայ, որ Քաղ. ժողովոյ կազմութեան եղանակին յարակից էր եւ ժողովոյ խորհրդածութեան թերեւս նիւթ դասնար ՚ի վերջէ, չուզեցի նախապէս տեսութիւն մ'ընել, եւ այդ ընտրութեան համար չեմ կրնար, ըսի, յանուն Քաղ. ժողովոյ անդամոց հաւաքաբար բան մը խօսիլ, իմ մասին ժրխակելով դայն: Սակայն Քաղ. ժողովոյ համարատուութեան տպագրեալ տեղեկագիրը հիմա բոլոր երեսփոխանաց ձեռքը կը գտնուի: Ղնդհ. ժողովն անոր ընթացքին հասու, գործոցը գիտակ եւ բոլոր պէտք եղած լոյսը քաղած է, ուրեմն կը մնայ իրեն որոշել թէ՛ նոր Քաղ. ժողովն ի՞նչպէս պիտի կազմէ: Հետեւապէս Քաղ. ժողովոյ Ատենապետ էֆ. իրեն այս կէտին հասած տեսնելով՝ ուրիշ բան մը չըրաւ, եթէ ոչ Սահմանագրութեան արգելքը յիշեցուց վերընտրութեան մասին:

Ոմանք ըսեն թերեւս թէ՛ քանի որ Քաղ. ժողովոյ համարատուութիւնը Սահմանագրապէս երկամեայ կը լինի, պէտք է որ՝ Քաղ. ժողովն ամբողջ երկու տարի պաշտօն վարէ եւ այնպէս տայ իւր համարը: Արդէն Քաղ. ժողովը ծանուցած է ձեզ թէ՛ ի՞նչ պատճառներով եւ ի՞նչ պարագաներու մէջ ազգային գործոց կառավարութեան գլուխն անցեր էր ինք: Քաղ. ժողովն երբ իւր պաշտօնատարութեան սկիզբները փութաց Ղնդհ. ժողովոյ վերանորոգումը կատարել, այն օրէն զինքը համարատու հրատարակեց անոր, եւ իւր բացառիկ ընտրութիւնն ՚ի միտածելով խնդրեց Ղնդհ. ժողովէն որ անմիջապէս իւր համարն առնու, որու ետեւէն քնակաւարար պիտի յաջորդէր նաեւ իւր հրաժեշտը: Սակայն Ղնդհ. ժողովը համարատուութեան ժամը չէ, ըսաւ, եւ Քաղ. ժողովը պարտաւորեցաւ պաշտօնը շարունակել. եւ ուր ուրեմն ինչպէս առջի օրէն յայտարարութիւնն ըրած էր ինք յարգել Սահմանագրութեան ոգին եւ ջանացած էր յարգել տալ, յարգեց նաեւ դայն այս պարագայիս մէջ եւ Սահմանագրութեան տարեգլխին հրածարեցաւ, իւր համարատուութիւնն ընելով:

Եւ անա այս պատճառներով Քաղ. ժողովոյ Ատենապետ էֆ. յայտարարեց հիմա թէ՛ ոչ եւս Քաղ. ժողովը պաշտօն ունի, եւ նորընտրութեան հարկը յիշեցուց, որ այսօր կատարելու որ եւ է արգելք չըկայ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Թէ եւ Քաղ. ժողովոյ համարատուութեան տեղեկագիրն իտրը դեռ թափանցած չեմք, սակայն ընդհանրապէս անձանթ չէ մեզ անոր ընթացքը, եւ հիմայ որ իւր հրաժեշտը կուտայ նա՛ քաղաքավարական հարկ մ'ունիմք անոր հատուցանելու. ուստի վստահութեան քուէ տայ կ'առաջադիւեմ Քաղ. ժողովոյ համար:

ԻԻԹԻՆՃԵԱՆ Կ. ԷՖ. — Վստահութեան թէ շնորհակալութեան քուէ տալ կ'առաջարկէ Օգոսէն էֆ.: Գիտել պէտք է որ վստահութեան քուէն պաշտօնի շարունակութիւն կ'ենթադրէ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Բարը դուք գտէ՛ք, զրէ՛ք:

Այս պահուս Քաղ. ժողովոյ անդամներն ոտք կ'եննեն եւ խմբովին ժողովարանէն կը մեկնին, որպէս զի իրենց ներկայութիւնը շնորհակալութեան քուէի առաջարկութեան եւ անոր արդեանց վրայ ազդեցութիւն չը գործէ:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Քաղ. ժողովն որովհետեւ իւր տեղեկագիրը հրատարակութեամբ հաղորդած է երեսփոխանաց, կը պնդէ իւր հրաժարականին վրայ եւ կը պարտաւորէ զՂնդհ. ժողովն այս հրաժարականի նկատմամբ պէտք եղած միջոցն անմիջապէս ձեռք առնուլ երկու միջոց կայ Ղնդհ. ժողովոյ համար. կամ համազել Քաղ. ժողովն որու համար Օգոսէն էֆ. վստահութեան քուէ առաջարկեց՝ իւր պաշտօնատարութիւնը ամբողջ երկու տարի լըրացնելու, եւ կամ անոր յաջորդն ընտրել, Կըրօնական ժողով ալ չը կայ, ուստի կ'առաջարկեմ որ այն ալ ընտրուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ եւ Ապրո էֆ. յանուն Քաղ. ժողովոյ կը հրատարակէ թէ՛ այսօրու ընէ դադրած է նա պաշտօնէն, եւ նիստ չունի, սակայն Քաղ. ժողովոյ ազգասիրութեան հետ չը համաձայնիր այս, եւ Ղնդհ. ժողովը չը կրնար ընդունիլ որ Քաղ. ժողովն իւր յաջորդը չընտրուած մէկէն դադրեցնէ իւր նիստը եւ ազգային գործերն անխնամ թողու:

Իսկ Օգոսէն էֆ. շնորհակալութեան քուէ առաջարկեց Քաղ. ժողովին համար. այս առաջարկութեան վրայ եթէ խօսք ուզող կայ, թող ինդրէ:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Առաջարկուած չընորհակալութեան քուէն եթէ Քաղ. ժողովոյ գործոց համար է, ի՞նչպէս կարելի է առանց

դաննք քննելու կարծիք ունենալ այն մասին .
Քաղ. ժողովն իւր համարատուութեան տեղե-
կագիրը թէ եւ երեսփոխանաց հաղորդած է
ուպագրեալ , բայց անոր ամբողջ պարունա-
կութեան վերահասու ըլլալ պէտք է :

Ես երէկ իրիկուն ուշ ատեն առի դայն եւ
ճրագի լայսով կարդացի . սակայն դեռ կար-
դալու բաներ եւ բացատրութիւն խնդրելու
կէտէր ունիմ , զորս առնելէ ետեւ՝ կրնամ
չնորհակալութեան քուէ տալ :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Ծնորհակալութեան քու-
է տալ կ'ընդունիմ , բայց գոհունակութեան
քուէ , ոչ . վասն զի այս քուէն Քաղ. ժողովոյ
հրաժարականն ընդունուած կ'ենթադրէ , մինչ-
դեռ ժողովը դեռ այդ մասին խօսած չէ :

Այս պահուս ատենը կ'ընդհատի , եւ ժո-
ղովը սակաւ ինչ դադար առնելէ ետեւ՝ վե-
րադարձին կ'սկսի շարունակուիլ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս երկրորդ անգամն է
որ Քաղ. ժողովը կը հրաժարի իւր պաշտօնէն ,
յայտարարելով թէ՛ վերստին զայն շարունակել
անհնարին է իրեն :

Կը մնայ Ընդհ. ժողովոյ որոշել թէ այս հը-
րաժարականն ընդունելի է , կամ ոչ . եւ եթէ
օրէնքն է զայն տրամադրողը , նոր Քաղ. ժո-
ղովոյ կազմութեան կերպին վրայ խորհիլ եւ
ընտրութիւնն ըստ այնմ կատարել փութով .
որպէս զի Նախագահ Արքայանն իւր աջակից-
ները գտնէ եւ վարչական գործերը կանոնադ-
րութեամբ յառաջ երթան :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ — Ճշմարիտ է որ մեր
ազգային պաշտօնատարներն , երեսփոխանէն
սկսեալ մինչեւ յետին պաշտօնատարը , ազատ
եւ բարոյական իշխանութեան մը ներքեւ են
միայն . երբ կայսերական կառավարութեան
պաշտօնատարներէն մին հրաժարի եւ հրահան
ընդունի պաշտօնը շարունակելու , պարտաւոր
է համակերպիլ այն հրահանին . սակայն երբ
մեր ազգային Քաղ. ժողովը հրաժեշտ տայ
պաշտօնէն եւ պնդէ , չը կրնար Ընդհանուրը
բռնադատել զայն , որ անպատճառ շարունակէ
պաշտօնը :

Քաղ. ժողովոյ խօսքերէն կ'երևի թէ իսպառ կը
հրաժարի Վսնի համար ժողով մը պէտք է բանիբուն
եւ գործօն մարդերէ կազմեալ , որք աջակցին
ինձ : Յաւօք կը գիտեմ որ մեր մէջ Ազգին
անձնութրաբար ծառայողներուն վարձատրու-

թիւնն եղած է՝ հրապարակային թերթերու
կողմէ յարձակում , պարսաւ . եւ ՚ի հարկէ ,
մարդ մը՝ որ խզի մտօք ծառայած է իւր աշ-
գին , որ սիրտ ու պատիւ ունի , կը վիրաւորի ,
եւ կը դիտեմ որ Քաղ. ժողովը վերջին աստիճան
ցաւ զգացած է իրեն դէմ եղած յարձակման
վրայ :

Գանք համարատուութեան տեղեկագրին ,
Անձնուր երեսփոխան իւր ձեռքն ունի զայն
հիմա . սակայն երբ շնորհակալութեան քուէ
առաջարկող եղաւ , դեռ կարդալու բաներ ու-
նիմ ըսաւ մէկը . այսինքն ըսել ուղեց թէ՛ չը
կերած ի՞նչպէս գոհանալու է : Իրստ իրաւացի
է այս դիտողութիւնը , պէտք է ընթեւնուի
ուշի ուշով այդ թերթերը , ըրովանդակութեան-
ցը հասու լինիլ , մեկնութեան կարօտ կէտ մը
եթէ պատահի՝ բացատրութիւն խնդրել , եւ
այնուհետեւ շնորհակալութեան քուէ տալ-
անձնուր երեսփոխանի իրաւունքն է այս :
Անցեալ նիստին ատենական կանոնադրութեան
համար ալ նմանօրինակ դիտողութիւն մ'եղաւ
ու քննութիւնը ետ ձգուեցաւ : Սակայն ու-
րիշ անհրաժեշտ հարկ մը կայ՝ որ ներքի չէ
զանց առնել եւ երկարաձգել , եւ այն է՝ նոր
Քաղ. ժողովոյ կազմութիւնը . պէտք է այս կէ-
տին վրայ խօսիլ , վասն զի ալ Քաղ. ժողով չը
կայ , եւ որոշել թէ՛ ի՞նչ եղանակաւ պիտի
կատարուի ընտրութիւնը , միթէ՞ քուէով ա-
տենապետ մը պիտի ընտրենք եւ անոր յանձ-
նենք որ իւր ընկերակիցներն անուանէ , եթէ
ոչ՝ ուրիշ եղանակաւ պիտի կատարուի Քաղ.
ժողովոյ կազմութիւնը : Այս մասին կարծիք-
ները տարածայն կ'երեւին :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Ես կ'ուզէի որ Քաղ.
ժողովը՝ մինչեւ յառաջիկայ Ապրիլ վերջ՝ իւր
պաշտօնը շարունակէր . որովհետեւ 1870 տար-
ւոյ Փետրուարի սկիզբները կոչուեք էր պաշտօ-
նի եւ իւր սահմանադրական երկամսոյ շրջանը
պէտք էր լրացնել , մինչեւ այն ատեն շարու-
նակելով պաշտօնը : Բայց քանի որ Նախագահ
Արքայանը կը յայտնէ թէ՛ Քաղ. ժողովոյ ան-
գամները ցաւած կամ որտե՛ստ են , չեմ պըն-
դեր այս կէտին վրայ եւ հարկ կը տեսնեմ որ
ժողովը նոր ընտրութեան եղանակին վրայ խոր-
հի : Փորձով գիտեմք թէ՛ այս ընտրութիւնն
Ընդհ. ժողովոյ մէջ ընելը՝ չը կրնար աղէկ ար-
դիւնք մ'ունենայ , եւ կը վախնամ որ ընտ-
րութիւններն անվերջանալի դառնան եւ ընաւ
Քաղ. ժողովը չը կազմուի : Թէ եւ Սահմանադ-

րութիւնը կը հրահայէ որ Քաղ. ժողովը 20 ան-
գամէ բաղկանայ , սակայն Ընդհանուր ժողովն
իրաւունք ունի . . .

Ատենապետ էՖ. կ'ընդմիջէ՝ ատենաբանը եւ
կ'ազդարարէ թէ խնդրէն կը շեղի , ընտրութեան
եղանակին վրայ խօսելով :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — (Ե-բ-ա-ն-ի-լ-լ) Որով-
հետեւ Նախագահ Արքայանը բացարձակապէս
յայտնեց թէ՛ Քաղ. ժողովը կը հրաժարի անդա-
նալի կերպով , եւ թէ ընտրութեան եղանակին խն-
դիրը հարկ է ձեռք առնուի . եւ ես կ'ըսեմ թէ
Ընդհ. ժողովն իրաւունք ունի Ատենապետ
մ'ընտրելով Ս. Նախագահին ու անոր յանձնե-
լու՝ որ իւր ընկերակիցներն անուանէ :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Զ. ԷՖ. — Հրաժարման խնդրոյն
վրայ խօսելու ատենս՝ նախ Քաղ. ժողովոյ
շնորհակալութիւն կը մատուցանեմ որ՝ Սահմա-
նադրութեան ոգին յարգելով իւր հրաժարակա-
նը կուտայ եւ իւր վերընտրելի չըլլալը կը ծա-
նուցանէ : Այս պարտապատշաճ շնորհալու-
թիւնս յայտնելէ ետեւ , կրնամ թէ՛ օրէնքն այս
հրաժարականը կ'ընդունի եւ թէ պէտք է Սահ-
մանադրապէս նոր ընտրութեան ձեռնարկել :

ԱՅՎԱՍԵԱՆ ՄԱՍ. ԷՖ. — Երբ Քաղ. ժողովն
անժամանակ ընտրուի եւ սահմանադրական շըր-
ջանը լրանայ , կը հրաժարի իւր իւր նախորդին
շարունակութիւնը : 1863 էն հաշուելով որ
Սահմանադրութեան գործադրութեան թուա-
կանն է՝ 1863 , 67 , 69 , եւ 71 Մայիս 1ին կը
լրանան Քաղ. ժողովոյ պաշտօնատարութեան
շրջանները , մինչդեռ այժմ այդ պայմա-
նաժամը անցած է եւ դեռ պաշտօն կը վա-
րէ արդի Քաղ. ժողովը , Նա կրնէ թէ՛ օրինաց
տրամադրութեան համաձայն՝ ժամանակին իւր
հրաժարականը տուեր է , սակայն իւր հրաժար-
ման խնդիրն անլուծելի մնացեր է եւ օտի դ-
ուեր է մինչեւ ցարգ պաշտօն վարելու : Նա-
խագահ Արքայանն ու Գիւանը պակասութեան
մէջ գտնուած են , մինչեւ ցարգ Ընդհ. ժողովը նոր
ընտրութեան չը հրաւիրելով , Քաղ. ժողովոյ հը-
րաժարականը՝ խնդրոյ ներքեւ անգամ ձգել ան-
սեղի է : Սակայն յառաջիկայ երեքշաբթի օր
Քաղ. ժողովը նիստ չունի ըսել ալ չըլլար Յանձ-
նաժողով մը կազմուի որ Քաղ. ժողովոյ ընտ-
րութեան վրայ երեսփոխանաց քուէներն առ-
նելով Պատրիարքարանի մէջ քուէհամար
կատարէ , եւ Նախագահ Արքայանը՝ յաւարտ

ընտրութեան նորընտիր Քաղ. ժողովը կը հրաւիրէ
իրեն աջակցելու :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այլատեան էՖ. ի դիտո-
ղութիւններն օրինաւոր են , միայն կը սխալի
երբ Քաղ. ժողովոյ ընտրութեան երկարաձգու-
թեան պատճառը Նախագահ Արքայանին եւ
Գիւանին վրայ կը բեռնաւորէ : Թէ եւ առօրեայ
պաշտօն մ'ունիմ ես Գիւանին մէջ , սակայն
արդարութեան պարտք մ'է ըսել թէ՛ այս եր-
կարաձգութեան մէջ եթէ պակասութիւն մը
կայ , նոյն իսկ ժողովոյն վրայ կը ծանրանայ ,
որու կամօքն եւ որոշմամբ Քաղ. ժողովոյ հը-
րաժարականը խնդիր մը դարձած եւ իրաց այս
վիճակին հասած է :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Երեսփոխան էՖ. ներէն
ոմանք կը մոռնան թէ՛ Ընդհ. ժողովը բացառիկ
պարագաներու մէջ կը գտնուի եւ նոյն իսկ
Քաղաքականին ընտրութիւնը բացառիկ եղա-
նակաւ կատարած է : Սահմանադրութիւնը կը
տրամադրէ որ Քաղ. ժողովը 20 անգամէ բաղ-
կանայ , եւ անոնց ընտրութիւնն ալ Ընդհանուր
ժողովոյ մէջ կատարուի , սակայն Ընդհ. ժողո-
վը նկատելով որ Սահմանադրութեան այս
տրամադրութիւններն՝ անդործադրելի են , անոնց
մէջ չափաւորութիւն մտցուցեր , Քաղ. ժողո-
վոյ անգամաց թիւը 20 էն ճի վեղջեր եւ ընա-
րութիւնը Արքայան Պատրիարքին յանձներ է :
Արդ՝ Ապրո ԷՖ. որ Սահմանադրութեան մէկ
տրամադրութիւնը մեր առջեւ դնելով ըսաւ
թէ՛ Քաղ. ժողովոյ անգամները վերընտրելի
չ'են , եւ ամեն անոնք՝ որ կը պնդեն թէ Քաղ.
ժողովոյ հրաժարականը սահմանադրապէս ան-
պատճառ ընդունելի ըլլայ Ընդհ. ժողովն , ա-
ռանց անոր անգամաց վերնտրելի ըլլալուն ,
թո՛ղ տեսնեն թէ՛ նոյն իսկ անոր ընտրութիւնը
Սահմանադրութեան տրամադրութեան համե-
մատ չէ կատարուած . եւ ըստ որում Ընդհ.
ժողովը Սահմանադրութեան վերաքննութեան
առթիւ բացառիկ պարագաներու մէջ կը գըտ-
նուի տակաւին այսօր , կ'առաջարկեմ որ՝ եթէ
պատշաճ գտնէ՛ Քաղ. ժողովոյ հրաժարականը
մերժելով , տարի մը եւս՝ որու հինգ ամիսներն
անցած են արդէն՝ շարունակել տայ իւր պաշ-
տօնին մէջ , եթէ անոր անգամներն ալ կ'ըն-
դունին : Եւ կամ եթէ Քաղ. ժողովոյ հրաժար-
ականն ընդունելի դատուի , գտնէ պէտք է
վերնայ վերընտրութեան օրինական արգելքը ,
որպէս զի Ընդհ. ժողովը կարող ըլլայ վերընա-
րել , արդի Քաղ. ժողովոյ անգամաց դէժ մէկ քանին

որոց ձեռնհասութիւնը վերձած է եւ որք կր-
 ւան Ազգին տակաւին ծառայութիւններ ընել :
ԱՂԱԲԵՎԵԱՆ Մ. ԷՑ. — Կառավարիւմ Քաղ. ժողովն
 միանգամ հրաւիրել իւր պաշտօնը
 շարունակելու, գէթ մինչեւ որ Ընդհ. ժողովն
 բնարական եղանակին վրայ մտածէ եւ Քաղ. ժո-
 ղովն կազմէ : Արդէն Ընդհ. ժողովը տրամադիր
 կերելի իւր գոհունակութեան քուէն տալու,
 եւ այս քուէն կը բանայ արդի Քաղ. ժողովոյ
 անդամոց գծկանակութիւնը :

Աշտարակեան ասնելով Քէկեան եւ Քօլօլ-
 եան էֆենտու ստաջարիութիւնները, իմ հա-
 յեցուածքս ռոգակար կը գանեմ նաեւ որ
 կրօն. եւ Քաղ. ժողովներն խառն լինին եւ չէ թէ
 ուրոյն ուրոյն մար կաններ իսկ եթէ չողեւոր գրակա-
 նական, հոգեւոր նախարկան խնդիր պատահի,
 նորա ձեռնհասութիւնն բարձր, այն ատեն էջ-
 միածնի դիմէ : Թէ եւ կը փախաքէի էջմիածնի
 Սինոդին մէջ այ մեր սինոդականներն ունենալ,
 զոր այժմ չունինք, եւ անոր համար է որ մեր
 յարաբերութիւնները կանոնաւորութեան մէջ
 չեն նորա հետ :

Հարկ չըկայ որ Ընդհ. ժողովն կրօն. եւ
 Քաղ. ժողովներուն անդամներն ընտրէ, այլ մի-
 այն անոնց ատենապետներն ընտրելով նոցա
 կը յանձնէ իրենց անդամակիցներն անուանել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Կը կրկնեմ, թէ ընտրութեան
 եղանակին վրայ խօսելու կարգն եկած չէ դեռ,
 պէտք չէ որ ժողովակներ այս երկու խնդիրներն
 հարաւ հետ չլիթեն : Իսկ կրօն. ժողովոյ գալով
 նա ոչ համար եւ ոչ հրաժեշտ տուած է, եւ ի
 հարկին այդ խնդիրն ալ պիտի յուշուի :

ԱՂԱԲԵՎԵԱՆ Է. ԷՑ. — Կը հաւանում որ ժո-
 ղովը՝ Նախագահ Սրբազանին միջոցաւ՝ Քաղ. ժո-
 ղովին հրաւեր կարգայ, ցնոր ընտրութիւն
 իւր պաշտօնը շարունակելու, սակայն չեմ հաւա-
 նիր երբէք որ ընտրութիւնը Սահմանադրութեան
 որանադրած եղանակէն տարբեր կերպիւ կա-
 տարուի :

Հին օրէնքը գործադրութեան չը դադարիր մին-
 եւ որ նորը չը հաստատուի :

ԻՌԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՑ. — Կերելի թէ ընտրու-
 թեան եղանակի խնդիրը ջերմ վիճարանութեան
 իւրեք պիտի դառնայ, եւ ո՛ր դիմէ թէ երբ կր-
 նայ վերջանալ : Նկատելու արժանի ամենէն
 մեծ կէտն այն է թէ՛ մինչեւ այս վիճարանու-
 թեան վերջանալը, երկար նիստերով որք մա-
 նաւանդ հնգետասանօրեայ ըլլալով ժամանակի
 տեւողութիւնն աւելի կ'երկարի, ո՛վ պիտի վարէ
 Ազգին գործերը : Քաղ. ժողովը կը յայտա-

րարէ թէ՛ ինք ոչ եւս պիտի գումարուի,
 կը հետեւի ուրեմն որ քանի մը ամիս ազգա-
 լին գործերը դադարեալ պիտի մնան :

Աւտի ես՝ Աղաբեկեան, Քէկեան էֆենտու
 եւ այլոց հետ համաձայն կ'առաջարկեմ հրաւի-
 բել Քաղ. ժողովն որ շնորհ ընէ իւր պաշտօնը
 շարունակելու եւ ազգային գործերն երեսի վր-
 րայ չը թողուլ, մինչեւ որ իւր յաջորդն ընա-
 րուի :

ԽՕՃԱՍՍԻՐԵԱՆ Օ. ԷՑ. — Անցեալ տո-
 րի՛ երբ Ընդհ. ժողովը վերանորոգուե-
 ցու, Քաղ. ժողովը հրաժարիլ ուզեց, բայց
 շարունակէ ըսին իրեն : եւ հիմայ որ վերադին
 կը հրաժարի վերջնական կերպիւ, զինքնորէն
 ստիպանօք առ ժամանակեայ կերպիւ պաշտօն
 շարունակելու հրաւիրելն իւր հրաժարականը լը-
 ւելեայն մերժել կը նշանակէ, եւ այս ընթաց-
 քը մեր քննադատութեան իրաւունքը կը սեղ-
 մէ : փասն դի բնական է որ՝ բռնի ընդունուած
 պաշտօնի մը համարատուութիւնը թիթեւ քնն-
 նադատութեան հանդիպելու տեսակ մը իրա-
 ւունք կ'ստանայ : Ըստ իս, Քաղ. ժողովոյ հրա-
 ժարականը պէտք է ընդունուած համարիլ եւ
 անցնիլ ընտրութեան խնդրոյն :

Եթէ Սահմանադրութեան 37րդ. յօդուածին
 դիմենք, Ընդհ. ժողովոյ մէկ նախորդ որոշու-
 մը՝ որ Քաղ. ժողովոյ անդամոց թիւը Յի զեղ-
 ջելով ընտրութիւնը Սրբազան Հօր յանձնել էր,
 եւ խիստ գործնական հանդամանք մ'ունէր՝
 ջնջած պիտի ըլլամք : Քաղ. ժողովոյ ընտրու-
 թիւնը Սահմանադրութեան տրամադրութեանց
 հետեւելով կատարելու համար՝ ետապատիկ թը-
 ւով ընտրելեաց ցանկ մը պէտք է, եւ անհար
 է ոչ հոս ի Պօլիս մեր Ազգին մէջ, այլ նաեւ
 ուրիշ երկրի, ուրիշ ազգի մէջ ալ, 60 քաղա-
 քաղէտ անձ գտնել, որ նաեւ յօժար գտնուին
 ընտրութիւնն ընդունելու :

Ասկէ առաջ Ընտրողական Յանձնաժողովոյ մէջ
 գտնուեցանք, որոյ անդամ էր նաեւ Եւ-
 թիւձեան էֆ. եւ ի՞նչ գծարութիւններ կը-
 բեցինք ընտրելեաց ցանկ մը՝ թէ եւ անկատար
 պատրաստելու համար : Այս տեսակ գրութիւն
 մը գործնական չէ եւ կը հակառակի բանակա-
 նութեան : Քաղ. ժողովն թէ եւ յայտնեց թէ
 իւր հրաժարականը վերջնական եւ օրինաց տը-
 րամադրութեանէն ծագած է, սակայն իւր հա-
 խագահ Սրբազանին բերնով նոր պատճառ մ'ալ
 իմացանք : Երբ ժողով մը զինքը լրագրական
 քննադատութեանց գէժ չը կրնար պաշտպանել
 եւ ցաւած կը հրաժարի, ի՞նչպէս կրնայ պաշտ-
 պանել ուրեմն ազգային գործերը : Նեաեւ ապէ՛ս

տկարութեան փորձ մը կուտայ : եւ միթէ ա-
 ւելի աղէկ չէ՞ որ վտանակ վեց կամ եօթ
 արանտած կամ յոգնած մարգեր վերադին ի պաշ-
 տօն կոչելու . . .

Ատենապետ էֆ. կ'ընդ միջէ բանախօսութիւ-
 նը, ատենարանին ազգարարելով թէ խնդրէն
 կը դարտուդի : Ատենաբանը կը պնդէ թէ խնդ-
 րոյն սահմանին մէջն է, եւ թէ հրաժարականի
 խնդրոյն վրայ կարծիք յայտնելու համար հարկ
 է նաեւ խնդրոյն յարակից պատճառները շօշա-
 փել եւ կշռել : Նեաեւ ապէ՛ս իւր խօսից թեւը
 ձեռք կ'առնու :

ԽՕՃԱՍՍԻՐԵԱՆ Օ. ԷՑ. — (Շարձ-ձեւէ) Կ'ա-
 ռաջարկեմ որ Սրբազան Պատրիարքն՝ ըստ ա-
 ռաջնոյն քանի մը անձէ բաղկացեալ Քաղ. ժո-
 ղով մ'ընտրէ՝ եւ անոր աջակցութեամբ անօրի-
 նէ ազգային գործերը, մինչեւ որ Ընդհ. ժո-
 ղովն ընտրութեան խնդրոյն վրայ պէտք եղած
 լոյսն առնու եւ վերջնական որոշում մը տայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ես այնպէս կըմբռնեմ որ
 Քաղ. ժողովն ինչպէս եւ ամեն ազգային ժո-
 ղով սահմանադրական պայմանաժամը լրացած
 ատեն հրաժարի, եւ Ընդհ. ժողովն առանց դե-
 ղեւելու ընդունի անոր հրաժարականը : Թէ եւ
 ասկէ առաջ՝ Ընդհ. ժողովոյն այս բացման ըս-
 կիցը՝ Քաղ. ժողովը հրաժարիլ ուզեց, սակայն՝
 որովհետեւ իւր հրաժեշտն անժամանակ էր՝ Ընդհ.
 ժողովը կրնար չընդունիլ զայն, բայց 1871 ապ-
 րիլ 3ին անցնելէ եւ սահմանադրական շրջանը
 լրանալէ ետեւ՝ Քաղ. ժողովին հարկ էր հրա-
 ժարիլ, ինչպէս որ ըրաւ Սահմանադրութեան
 տրամադրութեանց համաձայն : եւ ալ այնու-
 հետեւ Ընդհ. ժողովն այս հրաժարականը չէր
 կրնար խնդրոյ ներքեւ ձգել, չէր կրնար, չեմ
 ընդունիր, ըսել, այլ ընտրութեան կերպին վրայ
 մտածելով իւր որոշումը տալու էր : Միայն թէ՛
 Քաղ. ժողովն իւր հրաժեշտը ներկայացնելուն
 հետ վերընտրութեան խնդիրն ալ կը յուզէ եւ
 տեսակ մը պայմանի ձեւ կուտայ անոր : Ընդհ.
 ժողովն անոր հրաժարականը միայն կը լսէ, եւ
 պայմաններու տակ չը կաշկանդէր իր շարժման
 ազատութիւնը : Միւս կողմէ Քաղ. ժողովն ալ
 չը կրնար նաեւ վաղուրէն ժողովարանին դրո-
 ները գոցել, հեռանալ, այլ պէտք է շարունա-
 կէ, մինչեւ որ իւր յաջորդը գայ :

Այս առթիւ սա ալ կը յայտնեմ թէ, Քաղ.
 ժողովոյ անդամները պահ մ'առաջ երբ շնոր-
 հակալութեան քուէ տայու առաջարկութիւն

եղաւ՝ դուրս ելան ժողովարանէն, որպէս զի
 իրենց ներկայութեամբ կարծիքներու ազատու-
 թիւնը չըննչեն, եւ քանի որ այդ մասին խըն-
 դիր չըկայ Նիւս, կ'առաջարկեմ որ ներս
 հրաւիրուին :

ԽՕՃԱՍՍԻՐԵԱՆ Օ. ԷՑ. — Ի՞նչ հարկ կայ հրա-
 վիրելու, քանի որ խնքնին մեկնեցան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ո՛չ : Գիւանին ազգ ստին
 եւ ապա դուրս ելան :

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Խնդիրը պարզուեցաւ եւ
 Նախագահ Սրբազանն իւր կողմէ բացատրեց,
 ինչ որ դիմէր : Քաղ. ժողովոյ անդամներն անձ-
 նուիրաբար ծառայեցին Ազգին, եւ այս երրորդ
 անգամն է՝ որ իրենց հրաժարականը կուտան :
 Ի՞նչ հարկ կայ անոնց օձիքէն բռնել եւ վերը-
 սին պաշտօն վարելու բռնադատել զիրենք :
 Ժողովն այս հրաժարականն ընդունելով՝ շնոր-
 հակալութեան քուէ թօղ տայ, եւ Նախագահ
 Սրբազանին յանձնէ որ՝ Քաղ. ժողովոյ ան-
 դամոց ցանկ մը շինէ, կարուկ մարգեր նշա-
 նակէ ու ժողովոյս բերէ :

Քաղ. ժողովոյ անդամները Գիւանին կողմէ
 հրաւիրուելով այս պահուս ժողովարանէն ներս
 մտան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Եթէ ժողովը կը հաճի՝
 քուէի կը գնեմ հիմա Քաղ. ժողովոյ հրաժա-
 րականը, եւ ընտրութեան եղանակի խնդիրը
 յառաջիկայ նիստին կը թողու՞մ յուզել :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Արովհետեւ Քաղ. ժողո-
 վականք բացակայ էին հոսկէ, պարտք կը համարիմ
 ինձ յայտնել անոնց՝ Ընդհ. ժողովոյն կարծիքը,
 որ վիճարանութեան ընթացքէն յայտնի եղաւ :
 Ժողովական էֆէնտիներուն մեծազոյն մասին
 կարծիքն այն է որ՝ Քաղ. ժողովոյ պատուար-
 ժան անգամք շարունակեն իրենց պաշտօնը,
 մինչեւ որ նոր ընտրութիւն կատարուի : Իսկ
 ընտրութեան խնդիրը յառաջիկայ նիստին յուզ-
 ուի ամենէն առաջ :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՑ. — Երկու տեսակ առաջար-
 կութեանց պիտի պատասխանեմ : Ո՞մանք կ'ու-
 զեն որ, Քաղ. ժողովն առժամանակեայ կերպով
 շարունակէ իւր պաշտօնը՝ ցընտրութիւն նոր
 ժողովականաց : Սակայն ես այդ կարծիքէն չեմ
 եւ անտեղի կը գտնեմ զայն : Եթէ պիտի ըն-
 դունուի Քաղ. ժողովոյ հրաժարականը, պէտք
 է այսօր զայն ընդունիլ եւ անմիջապէս նոր
 ընտրութեան ձեռնարկել : այս առժամանակեայ
 վիճակին մէջ չեմ կարծեր որ Քաղ. ժողովը կա-

բող լինի Ազգային Իշխանութիւնն ըստ արժանւորն վարել, վասն զի առ ժամանակեայ պաշտօնավարութիւն մը չը կրնար պէտք եղած ազգեցութիւնը ներգործել: Ըսել չեմ ուզեր թէ ներկայ Քաղ. Ժողովոյ անդամներն Ազգային Իշխանութիւնը վարելու անձեռնհաս են, եւ անոնց ձեռնհասութիւնը քաջ կը ճանչեմ: Եթէ այս վերջին մէկ քանի ամիսներու մէջ Ազգային Իշխանութեան դէմ շարժումներ եղան, պատճառն ոչ Ազգային Իշխանութեան նուազումն է եւ ոչ Քաղ. Ժողովոյ անդամներն են, այլ Քաղ. Ժողովոյ պաշտօնավարութեան անժամանակեայ ընտելումն է:

Վարչութեան նեւ գործ ունեցողները կ'երկարաձգեն իրենց գործը եւ պէտք եղած նազանդութիւնը չեն մատուցաներ, նկատելով որ Քաղ. Ժողովը մէկ օրէն միւս օր փոխուելու ենթակայ է: մինչեւ անգամ Վարչութեան հակառակորդները Ընդհ. Ժողովոյ նիստերուն ներկայ գտնուելով Քաղ. Ժողովոյ անկեանք կ'սպասեն:

Այսպիսի տարտամ վիճակի մը մէջ 'ի հարկէ Վարչութեան ազգեցութիւնը տկարանալ կ'ըսկըսի, բայց Ընդհ. Ժողովը կարող է այս ազգեցութիւնը զօրացնել Վարչութիւնը վերահաստատելով:

Եր սխալին ուրեմն անոնք՝ որ իրաց այս անկայուն վիճակէն յառաջ եկած տկարութիւնը Քաղ. Ժողովոյ անդամոց կը վերագրեն եւ անոր փոփոխութիւնն անհրաժեշտ կը համարին. վասն զի, ինչպէս ըսի, Քաղ. Ժողովը կազմող անդամներն անձեռնհաս չեն, այլ անոնց պաշտօնավարութեան առ ժամանակեայ ընտելումն է պատճառ: Աւստի ես կ'առաջարկեմ որ Քաղ. Ժողովը մինչեւ յառաջիկայ մայիս շարունակէ իւր պաշտօնը, եւ եթէ այս անհար պիտի լինի, գէթ վերընարութեան արգելքը վերնայ. որպէս զի գոնէ Ընդհ. Ժողովը կարող լինի՝ Քաղ. Ժողովոյ անդամներէն որոնց վրայ որ վստահութիւն ունի թէ եւ ամենքն ալ վստահելի են, վերստին պաշտօնի կոչել:

ՔՕԼՕԵԱՆ Ա. ԷՑ. — Երբ հրաժարականի խնդիրն սկսաւ յուղուիլ, Նախագահ Սրբազանի բացատրութիւններէն ետեւ համոզուեցայ որ Քաղ. Ժողովը պիտի պնդէ իւր հրաժեշտին վերայ, եւ թէ անօգուտ ջանք մ'է զայն յորդորել վերստին իւր պաշտօնը շարունակելու: Նեւեւեւայէս ընտրութեան եղանակին վրայ մտածելու հարկը յայտնեցի, միևնոյն բանը կը կրկնեմ եւ հիմայ Իսկ այն երեսփոխանը՝ որ կը կար-

ծէ թէ անպատճառ Քաղ. Ժողովը 20 անդամ պէտք է բաղկանայ եւ թէ կրնայ այդ տեսակ ժողովի մը կազմութեանը յաջողիլ, կը սխալի: եւ թո՛ղ յիշէ որ Սահմանադրապէս Ընդհ. Ժողովն ալ չը կրնար նիստ կազմել մինչեւ որ 7) հոգի . . .

Ատենապետ էՖ. ընդմիջելով կ'ազդարարէ թէ ներեկի չէ ընտրութեան վրայ խօսիլ, հրաժարականի խնդիրը չորոշած:

Յ. ՈՍԿԱՆ ԷՑ. — (Ժ-Տ-Գ-Գ-Յ 'է 35-էն) Թրք տարածամած է, միայն քսան վայրկեան ունինք. էֆէնտիններ, օգտակար ընենք զայն. խնդրենք Քաղ. Ժողովէն որ գէթ ամսօրեայ միջոց մը շարունակէ իւր պաշտօնը, որպէս զի Ընդհ. Ժողովն ատեն ունենայ ընտրութեան եղանակին վրայ խորհելու: Իսկ եթէ անկարելի է այս գէթ Նախագահ Սրբազանին քանի մը օգնականներ սահմանենք:

ՓՍՓՍԱՅԵԱՆ Ս. ԷՑ. — Եթէ բան մը կայ որ ստակում կը պատճառէ ինձ, ընտրութեան խնդիրն է այն: կը փափաքէի որ երեսփոխանական Ժողովս այն դժուարութեանց մէջ չընկնէր, ուր էր իր նախորդ կազմութեան միջոցին կը յիշէ՞ք որ Քաղ. Ժողովը տարի մ'առաջ իւր համարատուութիւնը խնդրոց կարգն անցուցած էր, սակայն Ժողովս մեծ իմաստութեամբ վարուեցաւ, համարատուութիւնն իր որոշեալ ժամանակին վերապահելով: Այժմ Քաղ. Ժողովն իւր համարատուութեան տպեալ տեղեկագիրն երեսփոխանաց կը հաղորդէ, միանգամայն եւ իւր հրաժարականն ալ Նախագահի կը կրկնար, եթէ պաշտօնը շարունակէր մինչեւ մայիս 1, եւ Երեսփ. Ժողովս՝ որ մեծ ու կարեւոր խնդիրներուն իւր Գիւտնին վրայ դանտք լուծելու դրաղէր, քան թէ ընտրութեան խնդիրն:

Յիշել պէտք է եւ սակայն որ Ժողովս օրէնք մը դրած է. կը հր-ժ-դ-է՞ բառը պաշտօնէի մը բերնէ ելածին պէս՝ ընդունիլ անոր հրաժարականը, իսկ եթէ հրաժարման պատճառներ ունի՝ քննել զանոնք: Արդ կը նկատեմ որ Քաղ. Ժողովը կը հրաժարի եւ իւր հրաժարման պատճառներ ունի Նախագահ Սրբազանի պահ մ'առաջ տուած բացատրութեանէն՝ Խօճասարեան էֆ. տկարութիւն նշմարեց Քաղ. Ժողովոյ վրայ, եւ Պէկեան էֆ. անոր պատճառը մեկնեց, վերլուծեց. այս ամենը կարծել կուտան մեզ թէ Քաղ. Ժողովն արտաքին ազգեցութեան մը ե-

րեան կը հրաժարի: Ի՛նչ, Ազգային Վարչութիւնը՝ որ միայն Ընդհ. Ժողովոյ համարատու է եւ անկէ կընդունի իւր հեղինակութիւնը՝ արտաքին ազգեցութեան մը պատճառաւ հրաժարի, եւ մինչեւ անգամ յառաջիկայ երեքշաբթի նիստ չեմ կրնար ընել ըսէ՞: Գիւրջն է դուշակել թէ՛ այս վիճակը ինչ ծանր նետուութիւններ կը ծնի. Քաղ. Ժողովոյ պատիւն Ընդհ. Ժողովինն է. Ազգինն է այն, պէտք չէ որ դո՛ւս ի ազգեցութեանց: Անոնք որ կը կարծեն թէ Քաղ. Ժողովոյ փոփոխութիւնը անոր որոշմանց ալ փոփոխութիւն կը բերէ եւ այդ պատճառաւ կ'սպասեն անոր փոփոխութեանը, շատ կը սխալին. ո՞ր Ժողով առանց իրաւացի պատճառի կրնայ իր նախորդին որոշումը փոփոխել. եւ մի թէ այդպիսի փոփոխութիւն մ'ընող Ժողով մը՝ զարձեւալ երեսփոխանութեան համարատուութիւն պիտի չընէ՞: Կ'առաջարկեմ ուրեմն Քաղ. Ժողովոյ հրաժարականին պատճառը քննութեան առնուլ, եւ այս քննութենէ ետեւ միայն՝ անոր հրաժարականին վրայ մեր որոշումը տալ: Երբ պատճառը կը բարձուի, ալ Քաղ. Ժողովը կրնայ անարգել իր պաշտօնը շարունակել, իսկ եթէ Քաղ. Ժողովոյ Ատենապետ Ապրօ էֆ. այն ատեն ալ պնդէ իր հրաժարականին վրայ, իրաւունք կ'ունենանք իւր խօսքը՝ զոր երբեմն Ընդհ. Ժողովոյ Ատենապետ Օտեան էֆ. ին ըսաւ, իրեն ուղղելու թէ՛ Ժողովը չը խնդրեն, այլ իւր ազգասիրական պարտքը կը յիշեցնէ, առաջարկուած ազգային պաշտօնն յանձն առնելու համար:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍ. ԷՑ. — Կ'երկրորդեմ:

ՍՐՎԱՅԵԱՆ Թ. ԷՑ. — Եթէ երկրորդ եղին ինչ տուաջ, ես ալ կ'երրորդեմ:

ՊԷՆԵԱՆ Թ. ԷՑ. — Կը չորրորդեմ օւրեմն ես ալ:

ԵՌՆՈՒՑԵԱՆ Ց. ԷՑ. — Երբ պահ մ'առաջ Խօճասարեան էֆ. դո՛ւսնակութեան քուէ առաջարկեց Քաղ. Ժողովոյ համար, Քաղ. Ժողովը պարտ համարեց հասկէ մեկնել, որպէս զի ամենօր ազատօրէն քննադատէ անոր ընթացքը եւ իւր ներկայութեամբ տեսակ մը ճշման ներքեւ չընկնի արուելիք վճիռը: Քաղ. Ժողովը՝ մէկ ժամ ըսպասելէ ետեւ՝ կը յուսար որ Ընդհ. Ժողովն իւր քուէն, իւր վճիռն, ինչ որ է, տուած կը լինի. եւ ահա ներս կուգայ, կը զարմանայ տեսնելով թէ՛ տակաւին իւր հրաժարականի պատճառները կը փնտռեն եւ մանաւանդ պատճառներ կ'ենթադրեն:

Քաղ. Ժողովոյ հրաժարականին պատճառն իւր համարատուութեան նախաբանին մէջ՝ որ յատենի աստ կարգացուած է՝ գրուած էր մանրամասնօրէն, զոր քիչ մ'առաջ պատիւ ունեցայ վերստին կրկնելու: Քաղ. Ժողովն եթէ կը հրաժարի, պատճառն այն է միայն որ՝ սահմանադրապէս լրացած է իւր պաշտօնատարութեան պայմանաժամը, որիչ պատճառ չ'ունի երբէք:

Ըսին թէ Քաղ. Ժողովը տկարութիւն ունի յինքն եւ՝ անկարող պաշտօն վարելու՝ կը քաշուի ասպարէզէն: Յանուն իմ ընկերակցացոց բացարձակօրէն կը հրատարակեմ թէ՛ Քաղ. Ժողովը բնաւին՝ ո՞ր եւ իցէ պարագայի մէջ՝ տկարութեան փորձ տուած չէ, եւ յանձն չ'առնուր ունեցած ըլլալ երբէք: Ինք աւանդապէսն էր իրեն յանձնուած Ազգային Իշխանութեան, պարտաւոր էր՝ ձեռքն իւր խղճին վրայ դրած՝ այդ Իշխանութեան պատիւը, զօրութիւնն անարատ պահել, պահպանել եւ արտօնը դարձնել: Եւ ահա, երբ օրէնքն իրեն իմացուց թէ զայն տիրոջը յանձնելու ժամն եկած է, փութաց այդ աւանդը արտօնը բերել:

Քաղ. Ժողովը չէ թէ տկարութիւն ունեցաւ, այլ՝ երբ Ազգին պատիւը, Ազգին իրաւունքը հրամայեց՝ իւր ոյժն 'ի գործ դրաւ ամենայն զօրութեամբ: Եթէ իրեն գէթ թողաքներ գանուին, այս զօրութեան գործածութեան համար միայն կրնան լինիլ:

Կը տեսնէք Քաղ. Ժողովոյ գործերն, իւր համարատուութենէն:

Առաջարկութիւն կայ նաեւ որ՝ Քաղ. Ժողովն իւր պաշտօնը շարունակէ, մինչեւ որ Ընդհ. Ժողովն ընտրութեան եղանակին վրայ խորհի եւ անոր Քաղ. Ժողովը կազմէ: Ասկէ առաջ ալ Քաղ. Ժողովն իւր հրաժարականը բերած էր, Ընդհ. Ժողովը պարտաւորեց զանի շարունակել իւր պաշտօնը, մինչեւ որ համարատուութեան տեղեկագիրը տպեալ հաղորդուի իրեն: Քաղ. Ժողովս այդ պահանջման առջեւ լուեց, բայց հիմայ որ ամեն երեսփոխան ունի 'ի ձեռքին այդ տեղեկագիրը, չը կրնար այլ եւս նորէն պաշտօնի գլուխ անցնիլ եւ որոշումներ ընել. պէտք է որ՝ Ընդհ. Ժողովն այս հրաժարականի խնդիրը լուծեալ նկատէ եւ անոր Քաղ. Ժողովոյ կազմին փութայ, ինչ եղանակաւ որ յարմար դատէ:

Այս յայտարարութիւնն ընելէ ետեւ, ժամ է արդ՝ որ Քաղ. Ժողովն իւր խորին շարժակալութիւնը յայտնէ բոլոր Ազգին, որ իւր վր-

տանութեամբ պատուեց զինքն եւ քաջալերեց, որ իւր անօրէնութիւնները յարգեց եւ Քաղ. ժողովը կարող եղաւ ճշդիւ իւր պաշտօնը կատարել:

Կրնայ ըլլալ որ մասնաւոր անձինք զժողութիւններ ունենան. բայց Քաղ. ժողովը խօսքն ընդհանուր Ազգին վրայ է, եւ անոր վստահութեան վրայ կը հրճուի ինքն:

Ար կրնան խօսքս կրկնելով թէ՛ Քաղ. ժողովը կը հրաժարի Սահմանադրութեան ոգւոյն համաձայն, Պաշտօնի անցած ատեն՝ զայն պիտի յարգեմ բաւ, եւ իւր հրաժարականն ալ յարգանք մ'է Սահմանադրութեան ոգւոյն:

ԱՏԵՆԱԳՅԵՑ ԷՖ. — Եթէ այդ հրաժարականն ընդունի Մեզ, ժողովը, գարծեալ ընտրութիւնը յաջորդ նիստին կը մնայ. եւ եթէ Քաղ. ժողովը մինչեւ այն օրն իւր պաշտօնը չը շարունակէ, իւր ըրած ծառայութեանց վնաս կը բերէ:

ՄԱԶԼՈՄԵԱՆ Յ. ԷՖ. — Քաղ. ժողովը պաշտօնէն կը հրաժարի իւր օրինական շրջանը լըրացած ըլլալուն համար, հետեւապէս աւելորդ է ուրիշ պատճառներ փնտռել եւ անոնց վրայ խնդիր յարուցանել: Առաջարկեմ ուրեմն՝ հրաժարականի խնդիրը քուէի դնել եւ ընտրութիւնը յառաջիկայ նիստին թողուլ:

ԱՏԵՆԱԳՅԻՐ ԷՖ. — Ըսի, եւ կը կրկնեմ թէ՛ օրինաց գծած սահմանին առջեւ՝ անկտրելի է Քաղ. ժողովոյ հրաժարականը չընդունիլ. ըսի նաեւ թէ՛ Մեզ ժողովը պայմանաւոր հրաժարելու ընդունելու պարտաւոր չէ ընտելին: Մեզ ժողովը պէտք չունի արդի Քաղ. ժողովոյ անգամոց բնութեան թէ՛ ձեռք հրաժարելով ընդունիմ զձեզ չը վերընտրելու պայմանաւ, եւ ոչ ալ լսելիայն հաւանելու որ Քաղ. ժողովն այսօրուքէ անդին խորհրդարանի դուռը փակէ. նաեւ ոչ իսկ հանդերձեալ Քաղ. ժողովն ընտրելու համար պայմանաժամ դնելու: Վասն զի այս պայմանաց առջեւ իւր ազատութեան վրայ որ միշտ անքանաբարելի է՝ ճշոււմ հրաւիրած կ'ըլլայ. վասն զի իր առաջին գործն է՝ օրինաց ոգին եւ փորձագութեան ու ներկայ պարագայից պահանջները հաշտեցնող եղանակ մը խորհիլ եւ որոշել, Կեզը. Գործադիր ժողովոց ընտրութեան համար:

Աւստի յառաջիկայ նիստին, նոր ընտրութեան խնդիրը ժողովը կրնայ առաջին գործ ընել իւրեն, եւ այժմէն այնպէս խոստանալ հրաժարող Քաղ. ժողովին, վարած պաշտօնը մինչեւ ցնոր

ընտրութիւն շարունակելու առաջարկութեամբ, եւ միթէ այն ատեն հնա՛ր է արդի Քաղ. ժողովոյն եւ յուսայի՞ է իրմէ որ խորհրդարանը փակէ եւ վարչական գործերն անխնամ թողու:

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Քաղ. ժողովը պարտաւորութիւն ունէր իւր պաշտօնը կատարել, որքան ատեն որ կը հրամայէր օրէնքը, եւ պայմանաժամը լրացած է. եւ ոչ եւս պարտաւորութիւն ունի պաշտօն վարելու: Քաղ. ժողովականութեան պաշտօնը՝ Վեդ. ժողովոյ ատենականութեան պաշտօնին չը նմանիր, որու հետ բազմապէս ուղեցին. մեծ պատասխանատուութիւններ կ'ենթադրէ նա: Ահա տարի կը յայտարարեմ վերջապէս թէ՛ Քաղ. ժողովն՝ ըսա որում հրաժարեալ այս վայրկեանէն դերձ է այդ պատասխանատուութենէն. եւ կ'ազատիմ որ ժողովը նոր ընտրութիւնը փութացնէ: Օրէնքն ազատութիւն կուտայ ինձ պաշտօնէս հրաժարելու, եւ ես ալ իրաւունքս կը գործածեմ, ինչպէս կատարեցի պարտաւորութիւնս ալ:

ԱՏԵՆԱԳՅԻՐ ԷՖ. — Անձիւր անհատ օրէնքին երաշխաւորած ազատութիւնը պահելու իրաւունք ունի եւ կը վայելէ զայն. անտարակուսելի է այս. սակայն բաւական չէ ինձ հաւատացնելու որ Քաղ. ժողովը՝ յանուն այդ ազատութեան՝ առնէ, քալէ խորհրդարանէն չըջանաւ աւարտեցի բնութիւնը, եւ այսպէս ծանրանայ Մեզ ժողովին վրայ, շտապաւ նոր ընտրութիւն ընել սալու, մինչդեռ տակաւին այդ մասին ժողովոյ կարծիքը կաղմուած չէ:

ԵՌՍՈՒՑԵԱՆ Յ. ԷՖ. — Քաղ. ժողովը չըսէր թէ՛ Ազգ. Վարչութեան խորհրդարանը կը գոցէ, իմ տեղս անպատճառ այսօր ուրիշներ գըրէ՛ք, չըսեք, այլ կ'ըսէ թէ՛ քանի որ իւր հրաժարականին ընդունուելու վերջին պատճառն ալ վերցած է, քանի որ իւր համարատուութեան տեղեկագիրն երեսփոխանաց հաղորդած է, այլ եւս չը կրնար պաշտօն շարունակել եւ ազգ. վարչական գործոց պատասխանատուութիւն ընդունիլ:

ԱՏԵՆԱԳՅԻՐ ԷՖ. — Օրն այնչափ տարածուած է որ՝ խնդիրն առ կտիս չը թողու համար՝ Գիւանն հազիւ ժամանակ ունի, զայն ձեւակերպելով քուէի դնելու. ուստի Երեսփեան էՖ. ի պատասխանելէ առաջ՝ պարտաւորեալ եմ յանուն Գիւանի սա ձեւով առաջարկել խնդիրը, քուէի ենթարկուելու համար:

Ա. Քաղ. ժողովոյ հրաժարականն ընդունելի է:


Ք. Յաջորդին ընտրութեան եղանակն՝ յառաջիկայ նիստին՝ առաջին խնդիր է:
Գ. Քաղ. ժողովը՝ մինչեւ իւր յաջորդին ընտրութիւնը՝ պաշտօնը պիտի շարունակէ:

Ատենապետ էՖ. ժողովոյ քուէն կը խնդրէ այս առաջարկութեան վրայ:
Ժողովականներէն ոմանք բողոք կը բանան, առարկելով թէ օրէնքը քուէի չը դրուիր. Քաղ. ժողովոյ Ատենապետ էՖ. եւ այլք ոմանք կը պնդեն թէ՛ Սահմանադրութիւնն ընդունած է արդէն այս հրաժարականը. ոմանք՝ մաս առ մաս քուէի դնել կ'առաջարկեն, եւ ուրիշներ՝ ամբողջապէս չետեւաբար չփոթութիւն կը տիրէ ժողովարանին մէջ:

Ատենապետ էՖ. խնդրոյն եւ միանգամայն այս չփոթութեան վերջ սալու նպատակաւ, առաջարկութիւնը քուէի դնել կը փորձէ. բայց աղմուկը չը զայրեր, աղաղակներ կը յառնեն եւ քուէարկութեան փորձը չկատարուանք կը մնայ:

Ուր ուրեմն՝ օրը չախաղանցօրէն տարածուեալ՝ Ատենապետ էՖ. ատենը կը գոցէ, Քաղ. ժողովոյ հրաժարականի խնդիրը յաջորդ նիստին թողուլ, որ յառաջիկայ ուրբաթ աւուր համար կ'որոշուի:
Ատենը կը գոցուի ժամ 10 5/4 ին:




ՓՈՒԱՆԱԿ ԱՏԵՆԱԳՅԻՐ
Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
ԱՏԵՆԱԳՅԻՐ
Յ. Է. ՄԵՐԵՆԻՄ ՔՈՒԷ



Faint, illegible text at the top of the left page, possibly bleed-through from the reverse side.

Faint, illegible text in the middle section of the left page, possibly bleed-through from the reverse side.

Faint, illegible text at the bottom of the left page, possibly bleed-through from the reverse side.



ԴԻՆ Զ ՂՐՈՒՆ

ՍԵՖԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿՆ

Կը ծախուի ի Ղիւսնատան Պատրիարքարանի, և կը գանուի
Եկեղեցեաց բանկայնեքը :